

«ՎՐԱՍԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆՔ ՄԱՍԻ ԹԵՐԹԻՆ ԶԱՎԱՏԱՐԻՄ



Ախալքալաքի մուհիցիպալիտետի Մերեմիա գյուղի համարային դպրոցի մանկավարժական կոլեկտիվի եւ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ «Վրաստան» թերթի աշխատակիցներին եւ ընթերցողներին պարբերական հարյուրամյա հոբելյանի առիթով:

Մեր դպրոցի մանկավարժական ողջ կոլեկտիվը տարիներ շարունակ մնացել է ձեր հավատարիմ ընթերցողը եւ ձեր միջոցով հարգող դարձել շատ կարեւոր քաղաքական, հասարակական, մշակութային իրադրությունների: Թերթի դերը եղել է մնում

է անփոխարինելի ոչ միայն իբրեւ անաչառ տեղեկատվական աղբյուր, այլեւ իբրեւ մեր երկրում հրատարակվող միակ հայալեզու պարբերական այդ իրողության ամենալայն ընդգրկումով:

Շարունակելու ենք այսուհետեւ եւս մնալ մեկդարյա մեր պարբերականի նվիրված ընթերցողը՝ նաեւ այս կերպ կրելով հայապահպանության մեր առաքելությունը:

Հարգարժան Կան Բայբուրջյան, խորապես շնորհակալ ենք Ձեր մեծ նվիրումի համար, մաղթում ենք Ձեզ արգասաբեր գործունեություն եւ կիսուն ենք հարյուրամյա տպագրության պատմություն ունեցող թերթի խմբագիրը լինելու Ձեր վաստակած հպարտությունը:

ԱՆՈՒՇ ԲԱՂԲԵՅՅԱՆ

Ախալքալաքի մուհիցիպալիտետի Մերեմիա գյուղի համարային դպրոցի տնօրեն

«ՎՐԱՍԱՆԸ» ԵՆՔ ՎԻՐԱՅԱՅ ԴՊՐՈՋԻ ՊԱՏՄԱԳԻՐՆ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

«Վրաստանը» վիրահայ դպրոցի պատմագիրն է ոչ միայն քանակի, վիճակագրության, այլեւ որակի մասին, որովհետեւ երբեք բաց չի թողնում դպրոցական որեւէ միջոցառում ու աշակերտի նվաճում կամ մանկավարժի ձեռքբերում: Մեր դպրոցի շրջանավարտ որքան հայտնիների մասին է, դեռ որպես աշակերտ խոսվել «Վրաստանում» ու որքան ծնող է՝ հետևելով «Վրաստանի» կոչին իր երեխային հայկական դպրոց բերել: Կարծում եմ, դժվար չէ կռահել՝ ելնելով թերթի պատկառելի տարբից: «Առաջին զանգից»՝ «Վերջին զանգ», հին շենքից՝ նոր շենք, խնդրից՝ հանգուցալուծում... սիրելի

«Վրաստան», մենք շնորհակալ ենք այդ շարունակական ուշադրության ու հաճախ աջակցության համար, մեր դպրոցը ներկայացնելու, նրա գոյությունը կարեւորելու համար: Եվ ոչ միայն մեր, այլեւ ամբողջ երկրի բոլոր հայկական օջախների, իսկ մենք ուրախանում ենք յուրաքանչյուրի գոյության ու հաջողության համար, որովհետեւ մեր լինելությունը հենց միմյանցով է պայմանավորված: Շնորհավորում եմ, հարգատ քարեկամ, մեր անփոխարինելի «Վրաստան»: Լիահույս եմ, հարյուրը երկուհարյուր է դառնալու...

ՀԱՄՍԻԿ ՊԱՊՈՒԿՅԱՆ

Թբիլիսիի թիվ 103 հանրային դպրոցի հայկական բաժանմունքի փոխտնօրեն

ՎԻՐԱՅԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՓԱՐՈՍԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պետականության շինարարության, ներկա Վրաստան-Հայաստան օրըստօրե զարգացող բարիդրացիական հարաբերությունների զարգացման ուղղությամբ:

Իմ կյանքում «Վրաստան» թերթը դեռեւս վաղ պատանեկան հասակից ես տեղ ունի, նրանով եմ ուղղորդվել դպրոցական տարիներին, երբ որոշում ընդունեցի դառնալ լրագրող, ուսանելու ընթացքում, երբ արդեն թղթակցում էի սիրելի թերթին, նաեւ մինչեւ այսօր, երբ տասնամյակների ընթացքում աշխատելով այլեայլ կազմակերպություններում, երբեք չեմ ընդհատել կապը նրա հետ ընթերցել եմ մինչեւ վերջին տողը, օգնել եմ բաժանորդագրությանը, բարի, գործնական հարաբերություններ հաստատել ստեղծագործական կազմի հետ:

Քանի՞ քանիսին եմ հիշում պայծառ տխրությանը՝ Հակոբ Բլրցյան, Բենիկ Սեյրանյան, Նորայր Երթեցյան, Անահիտ Բոստանջյան, Սերգեյ Առաքելյան, Աղասի Մելքոնյան, Օֆելյա Սիրզոյան, Մարտունի Խաչվանքյան... ո՞ր մեկին թվես:

«Վրաստանը» երկրի ստեղծագործող հանրության համար առավելագույնս կարեւորվեց նախորդ դարի 90-ականներին

կեսերին, երբ մենք վերստեղծեցինք թունամյառական «Վերնատունը»՝ Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունը, որի համար մեր հոբելյարը դարձավ իհամալի խոսափող-իրենց ստեղծագործությունների հանրայնացման համար: Այդ գործում թերթը բացեց իր բոլոր խողովակները՝ թեմատիկ գրական էջեր, մասսայական մշակութային տոների լուսաբանում, ավագ եւ նոր սերնդի ստեղծագործողների հանրայնացում եւ այլն:

Չափազանց կարեւորում եմ «Վրաստանի» վերջին տասնամյակների խմբագիր Կան Բայբուրջյանի աշխատանքը: Ես ոչ միայն արհեստավարժ, վարպետ լրագրող է, այլեւ ճկուն, ամենատես ղիվանագետ, առանց որի, կասկածում եմ, թե թերթը կկարողանար շարունակել իր արգասաբեր գործունեությունը:

Կան Բայբուրջյանը Վրաստանի հայկական համայնքի երեւելի դեմքերից է, բազմազան մի գործիչ, ով երբեք չի զլանում օգնել որեւէ մեկին: Մշտապես կյանքի տարբեր բնագավառների իրադարձությունների կիզակետում է, հրաշալի է սահմանագատում կարեւորում եւ երկրորդականը, ամենադժվար պահերում անգամ գտնում միակ ճշգրիտ լուծումը:

Ավելացնենք նաեւ, որ

նա Վրաստանի խորհրդարանի այլեայլ նախարարությունների հանձնաժողովների անդամի կարգավիճակում եւս վայելել է վայելում է գործում եւ հնուտ քաղաքագետի անուն:

Իրենց գործը հմտորեն են վարում նաեւ Յուրի Պոդոյանը, Ջուլիետա Բադալյանը, Գայանե Բոստանջյանը, Աննա Սարիբեկյանը, Տիգրան Սիրադեղյանը, որոնց գրած, թարգմանած, սրբագրած նյութերն առանձնաձև են նյութի, մայրենիի իմացության, թերթի ձեւավորման եւ արտադրության տեխնիկայի բարձր մակարդակով:

Սրտանց շնորհավորելով «Վրաստան» թերթի մեկդարյա հոբելյանը՝ ցանկանում եմ նրան ստեղծագործական բացառիկ հաջողություններ, լրագրային նորանոր հմտություններ, տեխնիկական եւ նյութական լավագույն հնարավորություններ, Վրաստանի նորանկախ պետականության ամրապնդման, Հայաստանի Հանրապետության հետ բարիդրացիական հարաբերությունների հետագա զարգացման ուղղությամբ՝ որպես վրացահայ հանրության հայատառ մամուլի ֆլագմանի:

Փառք ու պատիվ մեր կյանքի արժանի ուղեկից «Վրաստան» թերթին:

ԺՈՐԱ ՄՆԵՅՅԱՆ
479 «Վերնատուն» միության նախագահ

ԱՆՀԱՏՆՈՒՄ ԾԱՆԱԴԱՐՉ ՔԵԶ, ՄԵՐ ՍԻՐԵԼԻ «ՎՐԱՍԱՆ»

Ամեն անգամ, երբ ձեռքս եմ վերցնում մեր սիրելի «Վրաստան» թերթը, իմ որբացած մանկության թախծով ու տառապանքներով լի պատանեկության հիշողությունների մթամած անդունդից, ասես արեւի ոսկեզօծ ճառագայթների ոսկեղեղծան փայլով իմ աչքերի առջևով կինոժապավենի արագությամբ իրար են հաջորդում դեպքեր, դեմքեր, իրադարձություններ՝ լի վերելքներով ու վայրէջքներով:

Ավելի քան վեց տասնամյակ առաջ էր, որ վեցերորդ դասարանի աշակերտ էի: Ինչպես միշտ, դպրոցականներին բաժանորդագրում էին տարբեր թերթեր ու ամսագրեր, իհարկե, ամենից առաջ «Վրաստան», ինչպես նաեւ «Փարոս», «Պիոներ կանչ» թերթերը: Մեր դասուղեկը՝ Վ.Կիրակոսյանը, մի օր ստուգեց, թե ովքեր են դուրս մնացել «Վրաստան» թերթի բաժանորդագրությունից: Տասներկու աշակերտներից միայն ես էի դուրս մնացել մեր հարգատ քերթի բաժանորդ դառնալուց: Իբրեւ ծնողագուրկ դպրոցականի, ինձ բաժանորդագրեցին դպրոցի տնօրեն Մ.Էվառճյանի շնորհիվ, հասարակական հիմունքներով: Չմայած նրան, որ մեր տանը, ուր վաղամեռիկ ծնողներից հետո «մի տուն լիք» մանուկներ էինք՝ ութ երեխա, սիրելի թերթը մեր ամենաընթերցելի մամուլն էր, այն հիմնարկի անվան կոլտնտեսության, այն ժամանակվա նախագահ՝ Գալուստ Մանուկյանը, սկզբնական կուսկազմակերպության քարտուղար եւ փառաբանված դաշտավարական բրիգադիր հայրս՝ Ռ.Ավագյանը, որ այդ տարիների կազմակերպիչներից էր եւ թերթերի բաժանորդագրության գործը կատարվում էր նրա կողմից: Մեր հարազատ «Վրաստանը» մշտապես ուղեկցել է մեր ընտանեկան կյանքի բոլոր բնագավառներում, իսկ դպրոցում, ուր սովորում էինք, երեք երեխա (ավագ եղբայրս տեղափոխվել էր հարեւան Մերեմիա գյուղը՝ որպես գյուղխորհրդի քարտուղար, երկու քույրերս ամուսնացել էին, երկրորդ եղբայրս ծառայում էր նախկին խորհրդային բանակում՝ Ավստրիայում) դառն ու դժվարին օրերի միջով



մեզ առաջնորդել են ուսուցիչները, բարի մարդիկ, ինչն էլ, նաեւ գրքերն ու թերթերը, առավել չափով մեր ընտանեկան եւ հասարակական կյանքի անբաժան ուղեկից «Վրաստան» թերթը՝ պատկառելի դեր կատարելով մայրենիի պահպանման, տարածման ու ամրապնդման: Եվ մինչեւ այսօր էլ իմ 80-ամյա առաջացած տարիքում իբրեւ խորհրդատու դարձյալ անուրանալի դեր է կատարում իմ հոգեւոր, մշակութային ու ստեղծագործական կյանքի բնագավառում: Ինձ վրա անջնջելի տպավորություն են թողել թերթի բոլոր ժամանակների խմբագիրներն ու նրանց աշխատակազմի անվանի ներկայացուցիչները՝ Ա.Չոբանյան, Բ.Բլրցյան, Ա.Մելքոնյան, Մ.Խաչվանքյան, Ա.Բոստանջյան եւ, իհարկե, մեր հարազատ թերթի ամենաերկարակյաց խմբագրապետն ու մամուլի անխնայ մշակ Կան Բայբուրջյանը: Թերթը բազմաբովանդակ, սյուժեների առատությամբ, հասարակական-քաղաքական դեպքերի ու իրադարձությունների մատուցմամբ, զեղարվեստորեն տպավորիչ ձեւակերպումներով, թեմատիկ խորագրերով ամենաընթերցելի թերթն է մնում ընթերցողների համար:

Ողջունելով մեր սիրելի «Վրաստան»-ի 100-ամյա հոբելյանի առթիվ, մաղթում եմ անհատնում ստեղծագործական ճանապարհի լի հավատավոր եւ նվիրված ուղեկիցներով:

ՎԱՆԻԿ ԱՎԱԳՅԱՆ
Լրագրող

գ.Փոքր Սամսար

ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱԶԱՆՈՎ - 97

Միջոցառմանը Բուսաբանական այգու տնօրինության ներկայացուցիչ Գիորգի Թարխնիշվիլին իր խոսքում նշեց, որ սույն տարածքի շեֆությունը ստանձնել է իտալական դեսպանությունը, եւ զարմանալի չէ, որ տնկին աճեցվել է նրան հատկից խոսե Մաջիներեի պատուհանագրին եւ տնկարկվել «Տոնիո Գուլերայի ծառուղում», վերածվելով հայ-վրացական պատմական բարեկամության խորհրդանիշի: Թբիլիսիի «Թունամյանի տուն» կենտրոնի գիտաշխատակից Գոհար Մազմանյանը նշեց, որ Փարաջանովը Սայաթ-Նովայի եւ Հովհաննես Թունամյանի հետ, պատմության մեջ մնաց որպես հայ-վրացական բարեկամության եռահունչ զուլեբող: «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Կան Բայբուրջյանը պատմեց կինոռեժիսորի իր բավական հաճախ կայացած հանդիպումների մասին, առանձնապես այն ժամանակահատվածում, երբ Փարաջանովը այցելում էր «Ջարյա Վոստոկայի» շենքում գտնվող խմբագրություններ, եւ ներկաներին մաղթեց ակնկալիքներով դիմավորել նրանու առաջին պտուղը: Եվ, ի վերջո, մեր քաղաքում ստեղծվի Փարաջանովի տուն-թանգարան, իսկ փողոցներից մեկը կոչվի մեծ արվեստագետի անունով: Վրաց բանաստեղծ Գոգի Բոճորիշվիլին ընթերցեց Փարաջանովին նվիրված իր բանաստեղծությունը, Թբիլիսիի

ՓԱՐԱԶԱՆՈՎՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ՆՈՒՆԵՆԻՆ՝ ԲՈՒՄԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒՄ

Ընթացիկ տարվա մարտի 17-ին, զարմանալի տար ու արեւոտ օրը, Թբիլիսիի Բուսաբանական այգում, «Տոնիո Գուլերայի ծառուղում», անցկացվեց փարաջանովյան նունեմու տնկարկման արարողությունը: Սա այն աշխարհառջակ իտալացի ռեժիսոր ու գրող Գուլերայն է, ով մի քանի անգամ այցելել էր Թբիլիսի, եղել Սերգեյ Փարաջանովի տանը, եւ ով, Արեւմուտքի մյուս հանրաճանաչ արվեստագետների հետ միասին, Սերգեյ Փարաջանովին բանտից ազատ արձակելու խնդրանքով դիմել էր խորհրդային կառավարությանը, որից հետո ճանաչված կինոռեժիսորը հայտնվեց ազատության մեջ: Տնկարկման գլխավոր նախաձեռնողը Սերգեյ Փարաջանովի ստեղծագործության ջերմ երկրպագու, հայտնի վրաց կինոդերմանսալիստ, ռեժիսոր եւ կինոօպերատոր Խոսե Մաջիներեն (Գիա Ալավիձե) էր:

պետհայրամայի թատրոնի դերասան Հենրիխ Պետրոսյանը ռեժիսորությամբ կատարեց Սայաթ-Նովայի երգերից: Թբիլիսիի «Բարեկամության տան» տնօրեն Նանա Նիկոլաձե

խոր գոհունակություն հայտնեց անցկացվող միջոցառման կապակցությամբ: Բանաստեղծ Գարիկ Ղալամբարովը ռեժիսորությամբ ընթերցեց Հովհաննես Կարայանի «Երկու մայր» բանաստեղծությունը, որը գրվել էր վրաց լեզվով եւ նվիրված էր հայ եւ վրաց ժողովուրդների բարեկամությանը: Ելույթ ունեցողների թվում էր նաեւ տողերիս հեղինակը:

Միջոցառմանը ներկա էին Վիրահայոց թեմի առաջնորդ Կիրակոս վարդապետ Դավթյանը, հայտնի արվեստագետ Գիա Սուլաքվելիձեն, «Թունամյանի տուն» կենտրոնի տնօրեն Գիսանե Հովսեփյանը, դաշնակահարուհի, ջազի միջազգային փառատոների դափնեկիր Դիմի Վիրսալաձեն, «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնի ղեկավար Եվգինե Մարկոսյանը, վրաց ճանաչված գրող Մարինա Սալարիձեն, Վրաստանի հյուրանոցների ասոցիացիայի փոխնախագահ Նանա Նախավիաշվիլին, նկարչուհի Իրինա Գագուան:

Միջոցառման մասնակիցների թվում էին նաեւ Վրաստանում Հայաստանի դեսպանության դիվանագետներ, մշակույթի եւ կրթության հարցերով խորհրդակցական Աննա Սահակյանը, խորհրդակցականներ Լեւոն Ջարգարյանը եւ Հարություն Հայրապետյանը:

ՍՐՏԵՍ ԿԻՐԱՎՈՅՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՅԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆԳՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԱՐՏԱՅԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԶԱՄԱՐ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԶՐԱԺԱՐԱԿԱՆ Է ՏԱԼՈՒ

Հայաստանում հունիսի 20-ին արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու մասին հայտարարելուց հետո, Հայաստանի Սահմանադրության համապատասխան դրույթների ոչ պաշտոնական վերլուծությունը հիմք է տալիս համարելու, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը կարող է լինել ապրիլի 20-ից մայիսի 5-ն ընկած ժամանակահատվածում:

Հայաստանի ընտրական օրենսգրքի 104-րդ հոդվածի համաձայն Ազգային ժողովի արտահերթ ընտրություններն անցկացվում են Ազգային ժողովն արձակվելուց ոչ շուտ, քան 30, եւ ոչ ուշ, քան 45 օր հետո: Այս ժամկետին գումարվում է 14 օր՝ Հայաստանի վարչապետի հրաժարականի գործընթացը, քանի որ Հայաստանի Սահմանադրության 149-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, վարչապետի հրաժարական ներկայացնելու դեպքում Կառավարության հրաժարական ընդունվելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, Ազգային ժողովի խմբակցություններն իրավունք ունեն առաջադրելու վարչապետի թեկնածուներ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն, վարչապետ չընտրվելու դեպքում քվեարկությունից յոթ օր հետո անցկացվում է վարչապետի նոր ընտրություն, եւ եթե պատգամավորների ընդհանուր թվի ծայրերի մեծամասնությամբ վարչապետ չի ընտրվում, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով:

Ընտրությունների կազմակերպման համար անհրաժեշտ է նաեւ ռազմական դրության ռեժիմի վերացում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԻ ՈՒ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԸՆԵՍՐԿԵՑԻՍ ՍՏԵՂԵՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ



Մարտի 13-ին կայացավ Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի եւ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը: Այն տեղի է ունեցել Հայաստանի նախագահի նախաչեռնած քննարկումների շրջանակում:

Հանդիպմանը Հայաստանի նախագահը եւ վարչապետը քննարկեցին երկրում ստեղծված իրավիճակը, այն հանգույցալուծելու եւ ներքաղաքական ճգնաժամը հաղթահարելու ուղիները: Այդ համարաբար հարկադրված անդրադարձ կատարվեց խորհրդարանական արտահերթ ընտրությունների անցկացմանը:

ՎՃՌԱՔԵԿ ՎՍԱՐՍԵ ԲԵՎԱՆԵՑ ԶՈՋԱՐՅԱՆԻ ՉՈՐՈՎ ՎՍԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Մարտի 17-ին վճռաբեկ դատարանը բեկանեց վերաքննիչ քրեական դատարանի Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գործով դատական ակտը, որով բավարարվել էր դատախազների բողոքը առաջին աստիճանի դատարանի՝ Սահմանադրական դատարան դիմելու որոշման դեմ:

Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ առաջին աստիճանի դատարանի կողմից բարձրացված սահմանադրարկական վեճը ենթակա է հաղթահարման բացառապես Սահմանադրական դատարանի կողմից:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱՎԱՐՊՈՒԸ ԲԱՐՁՐԱՅԵԼ Է

Ընթացիկ տարվա մարտի 17-ի դրությամբ, Սեւանա լիճը ծովի մակերեսույթից գտնվել է 1900 մետր 59 սանտիմետր բարձրության վրա:

Նախորդ տարվա նույն օրվա նիշը կազմել է 1900 մետր 44 սանտիմետր: 2021 թվականի հունվարի 9-ից մինչեւ մարտի 17-ն ընկած ժամանակահատվածում, Արփա-Սեւան թունելային ջրատարով եւ ստորերկրյա հոսքի միջոցով Սեւանա լիճ է տեղափոխվել 26 միլիոն 95 հազար խորանարդ մետր ջուր: Սեւանա լիճ թափվող զեպերում բնական եական փոփոխություններ չեն դիտվել:



«Եթե ցանկանում եք դիմել «Քայլ դեպի տուն» ծրագրին, խնդրում ենք լրացնել հայտարարումն այստեղ: Ցանկացած հարցի պարզապարզ ազատ եղեք կապ հաստատել qayldepitun@gov.am էլ. հասցեով կամ զանգահարել +374 10 515-517 հեռախոսահամարով»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՉԱԳԱՆՔԸ ԱՐՏԱՅԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Հայաստանի քաղաքական ուժերը արձագանքել են հունիսի 20-ին արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու մասին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությանը:

«Հանրապետություն» կուսակցությունը կոչ է անում քաղաքական դաշտի բոլոր կուսակցություններին բարեկրթության ու հանդուրժողականության մթնոլորտում անցկացնել քարոզարշավը, իսկ ՀՀ քաղաքացիներին՝ ակտիվորեն մասնակցել քվեարկությանը: «Հայ Ազգային Կոնգրես»-ը առանցքային նշանակություն է տվել Ընտրական օրենսգրքի փոփոխությանը, մերժելով «մեծամասնական-ռեյտինգային» ընտրակարգով արտահերթ ընտրությունների անցկացումը:

Ինչպես նաեւ, որ Հայաստանում ներկայիս Ազգային ժողովը եւս ընտրվել էր արտահերթ ընտրությունների արդյունքում, 2018 թվականի դեկտեմբերին:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ COVID-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄՈՏ ՈՐԵՎԷ ԱՐՏԱՌՈՑ ԴԵՊԷ ԶԻ ԳՐԱՆՑՎԵԼ

Հետպատվաստումային շրջանում Հայաստանում Covid-ի դեմ պատվաստված անձանց մոտ որեւէ արտառոց դեպք, սուր կողմնակի երևույթ չի գրանցվել:

Հայաստանի առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի խոսքով, Հայաստանում դեռեւս մեկ տիպի պատվաստանյութով են պատվաստումներ իրականացվում «Սպուտնիկ V»-ով: Ռուսաստանը տարեկազմին Հայաստանին նվիրել էր «Սպուտնիկ V» պատվաստանյութի 2000 դոզա՝ 1000 հոգու համար: Առողջապահության նախարարի հրամանով հաստատված են այն ռիսկի խմբերը, որոնք առաջնահերթ են պատվաստվելու: Պատվաստումները լինելու են կամավորության սկզբունքով: Հնարավորություն կունենան պատվաստվել տարեցների խմբերի կենտրոնների բնակիչները եւ աշխատակիցները, բուժաշխատողները, սոցիալական խմբերի կենտրոնների աշխատակիցները, 65 տարեկան եւ բարձր տարիքի անձինք, 16-64 տարեկան քրոնիկ հիվանդները: Աշխատանքներ են տարվում նաեւ տարբեր միջազգային կազմակերպությունների հետ՝ բնակչության որոշակի տոկոսի համար պատվաստանյութեր ձեռք բերելու համար:

Հայաստանի առողջապահության նախարարության տեղեկատվությամբ, Հայաստանում մինչեւ այժմ գրանցվել է կորոնավիրուսի մոտ 300 կրկնակի դրական դեպք: Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի խոսքով, ներկա դրությամբ հնարավոր չէ ասել, դրանք կրկնավարակի դեպքեր են, թե բուժառուներ, ում օրգանիզմից վարակը դեռ դուրս չի եկել: - Դա պարզելու համար այդ դեպքերն ուսումնասիրվում են հետազոտվում են, արդյունքների մասին հայտնի կլինի ավելի ուշ,- նշեց նախարարը՝ ավելացնելով, որ, ըստ որոշ մասնագետների, 90 օր պետք է անցած լինի առաջին դրական թեստից հետո, որ խոսենք կրկնավարակի մասին:



«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ԶԱՆԳԱՆԱԿԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը հայտարարություն է տարածել՝ արձանագրելով, որ պատերազմի ընթացքում հավաքագրված գումարները նպատակային են օգտագործվել:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստը, որը տեղի ունեցավ ս.թ. մարտի 15-ին, անցավ կառուցողական մթնոլորտում, եւ հոգաբարձուների խորհուրդը վստահություն հայտնեց, որ պատերազմի ընթացքում հավաքագրված գումարները նպատակային են օգտագործվել: Որոշվեց հոգաբարձուների խորհրդի անդամներից ստեղծել աշխատանքային խումբ, որը կաշխատի միջազգային աուդիտորական ընկերության եւ ներգրավված այլ կողմերի հետ՝ պատերազմի ընթացքում հավաքագրված եւ օգտագործված գումարների ուսումնասիրության նպատակով: Հոգաբարձուների խորհուրդը հետամուտ կլինի, որպեսզի փարատվեն հավաքագրված գումարների օգտագործման հետ կապված բոլոր կասկածները եւ ապահովվի հանրության վստահությունը: Հոգաբարձուների խորհուրդը եւս մեկ անգամ իր խորին շնորհակալությունն է հայտնում բոլոր նվիրատուներին՝ Հայաստանին եւ Արցախին ցուցաբերվող շարունակական աջակցության եւ նվիրվածության համար»:

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է «ՔԱՅԼ ԴԵՊԻ ՏՈՒՆ» ԾՐԱԳԻՐԸ

Հայաստանի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի նախաձեռնությամբ մեկնարկել է «Քայլ դեպի տուն» 2021 երկշաբաթյա ծրագիրը, որը հնարավորություն է տալիս սփյուռքի 13-18 տարեկան պատանիներին զարգացնել եւ ամրապնդել իրենց ազգային ինքնությունն ու ավելի լավ ճանաչել հայրենիքը:

Ճամբարային ծրագիրը կմեկնարկի հունիսի 21-ին եւ 4 փուլով կընթանա մինչ օգոստոսի 14-ը աշխարհի տարբեր ծայրերից եկած սփյուռքահայ 200 պատանիների համար: Յուրաքանչյուր փուլ հազեցած կլինի հետաքրքիր միջոցառումներով, ներառյալ՝ արեւելահայերենի եւ արեւմտահայերենի դասընթացներ, այցելություններ Հայաստանի պատմական, մշակութային, կրթական հաստատություններ, գյուղական համայնքներ եւ այլն:

Հայտադիմումները բաց են այն սփյուռքահայ պատանիների համար, ովքեր չեն հանդիսանում Հայաստանի քաղաքացիներ (բացառությամբ՝ երկբաղաբացիություն ունեցողների) եւ նախորդ տարիներին չեն մասնակցել «Արի տուն» եւ «Քայլ դեպի տուն» ծրագրերին: Ծրագրին միանալ ցանկացողներն իրենց նախընտրելի փուլին մասնակցելու համար, պետք է շտապեմ ավելի վաղ լրացնել հայտադիմումը: Հայաստանում 14-օրյա կացության բոլոր ծախսերը հոգում է Հայաստանի կառավարությունը, ներառյալ՝ ճամբարը, սենյակը, սնունդը, այցելությունները եւ այլն: Մասնակիցներն իրենց հաշվին հոգալու են Հայաստան ժամանման եւ մեկնման տրանսպորտային ծախսերը, ինչպես նաեւ իրենց հաշվին ձեռք են բերելու երկշաբաթյա տուրիստական ապահովագրություն:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՐՏ

21.03.2021 Գալստյան կիրակի

Մեծ Պահքի վեցերորդ կիրակին կոչվում է Գալստյան: Այս կիրակին Հիսուս Քրիստոսի Առաջին Գալստյան՝ մարդեղության հիշեցումն է:

27.03.2021 Ղազարոսի հարության հիշատակության օր

Մեծ Պահքի 41-րդ օրը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն Ղազարոսի հարության հիշատակի օրն է:

ՄՊՈՐՏ

ՆԻԿՈԼՈՋ ԲԱՍԻԼԱՇՎԻԼՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԼԵԳԵՆՊԱՐ ՈՒՋԵՐ ՖԵԴԵՐԵՐԻԻ ՆԿԱՏՄԱՍԲ



Վրաց թենիսիստ Նիկոլոզ Բասիլաշվիլին, Դոհայում անցկացված միջազգային մրցաշարում, բացառիկ հաջողության հասավ եւ ATP վարկանիշա-

ՎՐԱՑ ՌԵԳԻՍՏՆԵՐԻ ՀԱՂԹԱՐԵԱՎԸ



Վրաստանի ռեգբիի հավաքականը Եվրոպայի առաջնության մրցաշարում տոնեց երկրորդ հաղթանակը: Վրաց մարզիկները մարտի 7-ին, 29:16 հաշվով մրցակցի դաշտում պարտության մատնեցին Պորտուգալիայի հավաքականին, իսկ մարտի 14-ին, Մադրիդում, 25:19 հաշվով առավելության հասավ Իսպանիայի հավաքականի նկատմամբ: Մայրցամաքի առաջնության երկու արտագնա հանդիպումներում շահած չորս միավորով, Վրաստանի հավաքականը գլխավորեց առաջնության ընթացիկ խաղաշրջանի աղյուսակը: Մարտի 21-ին Վրաստանի հավաքականը մրցակցի դաշտում իր ուժերը կշարժի Ռուսաստանի հավաքականի հետ, ապա մարտի 27-ին եւ հունիսի 27-ին սեփական հարկի տակ կհյուրընկալի Ռումինիայի եւ Բուլղարիայի հավաքականներին:

Հիշեցնենք, որ Եվրոպայի առաջնության ընթացիկ եւ հաջորդ խաղաշրջանը ներառում է նաեւ աշխարհի գավաթի որակավորման փուլերը եւ, հետեւաբար, յուրաքանչյուր հանդիպման արդյունքն արտակարգ նշանակալից է:

ՄԱՅՐԱՔԱՐԱՔ

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՄԻԿՐՈՎԿՏՐՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԵՎԱՐՁԸ ԷԺԱՆԱՆՈՒՄ Է



Թբիլիսիի քաղաքապետարանի որոշմամբ, ապրիլի 1-ից Թբիլիսիի նոր միկրոավտոբուսների ուղեվարձը կլինի 50 թեթրի՝ 80-ի փոխարեն:

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձե, միկրոավտոբուսներում կգործեն նաեւ այն արտոնությունները, որոնք կան ավտոբուսի ու մետրոյի դեպքում. այսուհետ միկրոավտոբուսով երթեկեցուց հետո եւս, 1,5 ժամվա ընթացքում, այլ տրանսպորտային միջոցից օգտվելն անվճար կլինի:

- Քաղաքացիները, ովքեր մետրոյում եւ ավտոբուսներում օգտվում են արտոնյալ սակագներից, կկարողանան նույն արտոնություններից օգտվել նաեւ միկրոավտոբուսներում,- հայտարարել է Կախա Կալաձեն:

Ասենք նաեւ, որ որոշ կատեգորիայի ուղեւորներ հնարավորություն կունենան անվճար երթեկեցել: Մասնավորապես, անվճար երթեկեցելու իրավունք է վերապահվում Թբիլիսիում հաշվառված՝ տեսողության խնդիր ունեցող ու-

ղեւորներին եւ ուղեւորության ընթացքում նրանց ուղեկցող անձանց, երկրորդ համաշխարհային պատերազմի վետերաններին, այլ երկրների տարածքում ռազմական գործողությունների մասնակից վետերաններին, զինված ուժերի վետերաններին, դպրոցականներին, ներքին գործերի նախարարության տեսուչներին:

Հատուկ արտոնություններ են նախատեսված նաեւ սոցիալապես անապահով ընտանիքների անդամների համար:

Կախա Կալաձեի խոսքով, տրանսպորտային բարեփոխումը, որոնք ներառում են հասարակական տրանսպորտի արդիականացում, ճանապարհային ենթակառուցվածքների կազմակերպում եւ նոր երթուղային ցանցի զարգացում, կավարտվեն մինչեւ 2023 թվականը: Թբիլիսիի քաղաքապետարանը նախատեսում է մեկ տարվա ընթացքում լիովին թարմացնել մայրաքաղաքի ավտոպարկը: Ներկայումս Թբիլիսիում սպասարկում է 1800 միկրոավտոբուս: Օրվա ընթացքում ավելի քան 600 հազար մարդ է օգտվում միկրոավտոբուսներից:

«Հայարտուն» կրթամշակութային կենտրոնը խոր վշտով ընկալեց կենտրոնի դիռլի խմբակի ղեկավար, Թբիլիսիում ճանաչված երաժիշտ, 68-ամյա

Ռոբերտ Եղիշի ԿԱՇԱԿԱՆԻՉԵՒ



մահը եւ իր անկեղծ ցավակցությունն է հայտնում հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի մանկավարժական կոլեկտիվը, «Վրաստան» թերթի խմբագրությունը իրենց վշտակցությունն են հայտնում կրթօջախի պարունույց Լիանա Կաշավանիձեին, սիրելի եղբոր՝

Ռոբերտ ԿԱՇԱԿԱՆԻՉԵՒ

մահվան կապակցությամբ եւ ցավակցում հանգուցյալի ընտանիքին ու մերձավորներին:

50x50 grid with numbers 1-52 highlighted in blue.

Խ Ա Չ Բ Ա Ռ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ. 6.Երդիկ, բացվածք օդի համար: 8.Հատուկ մարզածեղ զբաղվող մարզիկ: 10.Վրաց ծյուրդիստ, Պատվո շքանշանի ասպետ ... Խերգիանի: 11.Ֆրանսիական օրաթերթ: 12.Գետ Հայաստանում: 15.Գետ Անգլիայի հյուսիս-արեւմուտքում: 17.Ծառա: 18.Թույլատրելի չափ: 21.Սփռոց, հացկերույթ: 23.Թղթախաղ: 24.Քաղաք Արեւմտյան Հայաստանում: 26.Հին հայկական ամասնում: 27.Մինչեւ ոտքերը հասնող զգեստ: 29.Դարդ: 32.Պետություն Հյուսիսային Եվրոպայում: 33.Թշնամի, հակառակորդ: 35.Դեղահատ: 37.Ալկոհոլային խմիչք: 39.Քիմիական տարր: 42.Վախկոտ մարդ (փխբ.): 45.Վրաստանի, Հայաստանի, Հունաստանի թատերական փառատոների դափնեկիր, Թբիլիսիի Պ.Աղանյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար... Բայանդուրյան: 47.Քաչալ: 48.Ապագա: 50.Հայ ռեփեր: 51.Անառարկելի, վստահեցուցիչ: 52.Խորհրդային դերասան, կատակերգու Գեորգի ...

ՈՒՂԱՆՆԱԿԱՆ. 1.Միջերկրական ծովի մաս կազմող կիսափակ ծով Ապենինյան եւ Բալկանյան թե-

րակղզիների միջեւ: 2.Նամուսը կորցրած, անթափ: 3.Պատիժ, վտարում: 4.Օտար, անհարազատ: 5.ԱՄՆ առաջին նախագահ՝ Վաշինգտոնի անունը: 7.Հանդես, միջոցառում: 8.Կերուխում սիրող մարդ (վրաց.): 9.Նշանակություն, ազդեցություն: 13.Երեւանյան ֆուտբոլային ակումբ: 14.Սփի բալիկ: 16.Ֆրանսիացի եկզիստենցիալիստ փիլիսոփա ժան Պոլ ...: 19.Չեւ, միջոց: 20.Շան ցեղատեսակ: 22.Դոման: 25.Նախընթաց, անցյալ: 28.Անկալ, ան (արեւմտ.): 29.Սագ, վարս: 30.Ոգելից խմիչք: 31.Տուրք: 34.Վրացի բանաստեղծուհի ... Նոզաձե: 35.Դյուբիչ, թովիչ: 36.Բվերի ընտանիքի գիշատիչ թռչուն: 37.Հացահատիկ աղալու ջրային աղաց՝ աղորիք: 38.Անգլիացի ֆիզիկոս, մաթեմատիկոս Իսահակ ...: 40.Մայր շնչերակ: 41.Սարքերի լայն սպեկտրի շուրջ աշխատանքների համար գործողությունների համակարգի հաթակ: 43.Մուսուլման դատավոր: 44.«Անցավ գլուխը դնել ... տակ»: 46.Նագանք, կոկետություն: 49.Զինացի դերասան, ուշուկ վարպետ Ջեթ ...:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱՐԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ. 1.Նեպոլ: 4.Հաղորդ: 9.Հարու: 10.Դրախտ: 11.Արդ: 12.Բառն: 13.Եզր: 15.Ուստա: 17.Նեղոս: 19.Եթե: 21.Սին: 22.Սիս: 24.Թեյ: 25.Ավատար: 27.Ակռա: 29.Աթանես: 33.Ակր: 34.Աներ: 35.Ախ: 36.Ֆա: 37.Լսել: 38.Եղիա: 39.Ասլի: 41.Մայա: 44.Քլունգ: 46.Թեմա: 49.Դիանա: 51.Սալոմե: 53.Արդի: 55.Լի: 56.Թագոր: 58.Մմա: 60.Չորս: 61.Եհովա: 63.Ներսես: 64.Ձարե: 65.Մարալ:

ՈՒՂԱՆՆԱԿԱՆ. 1.Նժդե: 2.Ապամի: 3.Որտեղ: 4.Հար: 5.Արդուկ: 6.Դու: 7.Ուրբեք: 8.Մանկա: 9.Հարսի: 14.Չոսյա: 16.Տեխաս: 18.Ենթակա: 20.Երասխ: 23.Խայրամ: 25.Անելիք: 26.Վերսալ: 28.Ռաֆայել: 30.Թաներ: 31.Ան: 32.Կուտիցա: 35.Ալանի: 40.Սգալ: 42.Աբա: 43.Ամոթ: 45.Ուղիներ: 47.Ամաչել: 48.Մարսել: 50.Նինվե: 51.Սուրամ: 52.Եզր: 54.Ուն: 57.Որա: 59.Սիա: 62.Որս:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՉՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՔՅՅԵՈ ՅՈՆԱՅՅԵՄՈ: ՄԾՈԼՕՆՈ 0105, Ճ.ՅՄՐԵՅՕՐՆ ԳՅՅԵՅ 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ՓՅՕ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 Կ - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՅՅՅԵՅՅ»
ՄԾՈԼՕՆՈ, ՆԱՅՅԵՄՅՕՐՆ
«ՅՐԱՏԱՆ»
Тбилиси, Грузия
«VRASTAN»
Georgia, Tbilisi
Индекс 66445